ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2012 թվականի թիվ 101 - Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 10-ի <<ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> թիվ 919-Ն որոշման.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հաստատել <<ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողությունների պլանը >>համաձայն հավելվածի

2.Տավուշի մարզային փրկարարական վարչության պետին՝ տասնօրյա ժամկետում իմ հաստատմանը ներկայացնել <<ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողություններ պլանը >> ապահովող փաստաթղթերի փաթեթը

3.ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Մխիթարյանին՝ առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին տեղական կարգադրություններով հաստատել <<ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում համայնքների գործողություններ պլան >>-ները՝ համաձայնեցնելով ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետի հետ և ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետի հաստատմանը

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 12
ք. Իջևան